Գեղանուշ

Բնակչություն՝ 266

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1040 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Գեղանուշը նախկինում մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուր Գավառի մեջ, Գեղանուշ է Վերանվանվել ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի 1949թ. հունիս 29-ի հրամանագրով (նախկին անվանումը Կյուտկում): Գյուղում 1933թ., ներառելով Գոմարան գյուղը կազմավորվել է կոլտնտեսություն, որը 1991թ. լուծարվել է: ՝ Գեղանուշի շրջակայքում կան Սրհակ, Խնգյու և Ղազանգյոլ հին բնակատեղերի ավերակներ, դամբարան (մ.թ.ա. 1 հզմ), 10-17 դդ. գերեզմանատուն: Գյուղում կա երկու եկեղեցի, որից առաջինը 15-16 դդ. կառույց է, երկորդը՝ սբ Հռիփսիմեն՝ կառուցված 1800թ., վերանորգվել և ներկայումս գործում է: Գեղանուշցիներ են ՍՍՀՄ հերոս Մ.Հարությունյանը, ՍՍՀՄ մինխորհրդի նախագահի տեղակալ Լ.Կոստանդովը, ԱՄՆ-ում բնակվող նեյրովիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարուժան Կոստանյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 7744 հա, այդ թվում՝
-Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2120 հա, որից՝
- վարելահող՝ 133 հա, խոտհարք՝ 12 հա, արոտ՝ 868 հա, այլ հողատեսք՝1106 հա
- բնակավայրերի հողեր՝ 92 հա,
-արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 25 հա
-էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝5 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 14 հա,
-անտառային հողեր՝ 5455 հա, որից անտառածածկ՝ 4437 հա
-ջրային հողեր՝ 33 հա